Նորայր Սիսակյանի անվան թիվ 5 ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ «Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպան տեխնոլոգիան»

Անցկացման վայրը՝ Աշտարակ

Ղեկավար՝ Մալխասյան Լիլիթ

Կատարող՝ Հովհաննիսյան Հասմիկ

Դպրոց՝ «Օրգովի Արբի Թրպանճյանի անվան միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ

ԱՇՏԱՐԱԿ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն. 3

2. Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիան……4

3. Գործնական համատեքստ……..…..13

4. Եզրակացություն 20

5. Օրվա դասի պլան……..…..22

6. Օգտագործված գրականության ցանկ……27

Ներածություն

Ժամանակակից մանկավարժական գործընթացի առաջնահերթ խնդիրն է յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տալ զարգանալու իր անհատական առանձնահատկություններին համապատասխան և նրա ինքնադրսևորման համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ: Նման ուսուցումը կընդգրկի երեխայի անձնական որակների լայն շրջանակներ, և կբխի նրա անհատական կարիքներից ու առանձնահատկություններից:

Ժամանակակից հասարակության համար աշակերտների՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և դրանք կատարելագործելու կարողություններն ավելի կարևոր են: Այդ պատճառով ուսուցիչը պետք է կարողանա օգտագործել այն տեխնոլոգիաները, որոնք կբավարարեն ժամանակի պահանջները:

Ուսուցման գործընթացում անհատական մոտեցում ցուցաբերելու գաղափարն արդեն բազմիցս է շեշտվում:

Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարներ, և իհարկե, անհատական մոտեցում:

Հայտնի է, որ դասարանում աշակերտներն ընդունվում են ըստ տարիքի: Նրանց մտավոր կարողություններն ու անձնային որակները հաշվի չեն առնվում: Հետևաբար աշակերտները ուսուցման գործընթացում չեն կարող ապահովել գիտելիքների յուրացման միևնույն մակարդակը և զարգացման նույն տեմպով առաջ գնալ:

Ուստի անհատական մոտեցաման գլխավոր պայմանը պետք է լինի յուրաքանչյուր երեխայի ուսուցման և զարգացման հարաբերակցումը:

Դաստիարակությունը դժվար գործ է, և նրա պայմանների բարելավումը յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականություններից մեկն է, որովհետև չկա կարևոր բան, քան ինքն իրեն և իր մերձավորներին կրթելը:

Սոկրատ

Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիան

Բոլոր ժամանակներում, ինչպես նաև հիմա հասարակության զարգացման և առաջընթացի հիմքում ընկած է կրթված և դաստիարակված քաղաքացին: Այդպիսի քաղաքացու ձևավորումն իրականանում է ուսումնական հաստատություններում: Ուսումնական հաստատություններում իրականացվում են ուսուցման մի շարք տեխնոլոգիաներ, որոնք ուղղված են ուսուցման որակի և արդյունավերության բարձրացմանը: Այդ տեխնոլոգիաների մեջ տարբերակում ենք այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք մշտապես կիրառվում են և լայն ճանաչում ունեն, և տեխնոլոգիաներ, որոնք հազվադեպ են կիրառվում: Վերջիններս գիտության մեջ ընդունված է անվանել այլընտրանքային: Այդպիսի տեխնոլոգիաներից է ուսուցման անհատականացման տեխնոլոգիան: Այս տեխնոլոգիայի կիրառումը հանրակրթական ուսումնական հաստատություններում արդարացված է, քանի որ այն հումանիստական է և այստեղ պաշտպանվում է անհատական տարիքային առանձնահատկությունների հաշվառման մանկավարժական

սկզբունքը: Այս տեխնոլոգիան արդի ժամանակաշրջանում պետք է առանձնակի տեղ ունենա ուսուցման գործընթացում, քանի որ պայմանավորված համընդհանուր ներառական կրթության ներդրմամբ՝ ուսուցանվողների զգալի մասն ունի անհատականացված ուսուցման կարիք: Կան երեխաներ, որոնց մոտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն առավել արդյունավետ է իրականացվում անհատականացված ուսուցման պայմաններում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել այլընտրանքային տեխնոլոգիաներից անհատականացված ուսուցման տեխնոլոգիան և գնահատել դրա դերն ու առավելությունը ուսուցման գործընթացում:

Անհատական մոտեցումը, դա.

- Մանկավարժության սկզբունք է, որի համաձայն ուսումնադաստիարակչական աշխատանքում ուսուցիչը աշխատում է ոչ միայն աշակերտական խմբի, այլ առանձին աշակերտների հետ անհատական մոդելով՝ հաշվի առնելով նրանց անհատական առանձնահատկությունները,

- Երերխայի հետ շփման գործընթացում շեշտը դնում նրա անհատական առանձնահատկությունների վրա :

- Ուսումնական գործընթացում երեխայի անահատական առանձնահատկությունների հաշվառում,

- Մանկավարժահոգեբանական պայմանների ստեղծում ոչ միայն բոլոր սովորողների զարգացման, այլ նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման համար :

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ՝ ինտելեկտուալ /մտավոր/ ֆունկցիաների խանգարումով սովորողի հետ անհատականացված մոտեցմամբ իրականացված աշխատանքի արդյունքներն առավել ակնառու են և չափելի: Սովորողն ազատ

կարողանում է արտահայտել իր իմացությունը, փորձում է կատարել վերլուծություններ՝ նախատեսված / հարաբերականորեն երկարացված/ ժամանակամիջոցում, գիտի, որ ունի հանձնարարություն, որը պետք է ինքը պատրաստի և ներկայացնի/ հանձնարարությունը տրվում է՝ հաշվի առնելով սովորողի իմացության առկա մակարդակը/: Այս կերպ, բացի գիտելիքներից, սովորողի մոտ ձևավորվում է պատասխանատվություն, սկսած աշխատանքը մինչև վերջ հասցնելու պատրաստակամություն: Այստեղ չկա երրորդ անձ, ով իր փոխարեն կկատարի իր համար նախատեսված առաջադրանքը, իսկ ուսուցիչը միայն կուղղորդի առաջադրանքի կատարման ընթացքում:

Նյութի ամփոփման նպատակով ուսուցիչը կատարում է ամփոփիչ հարցադրումներ, որոնք սովորաբար կազմված են լինում երկու-երեք հիմնական հարցերից:

Հանրակրթական դպրոցում են դրվում բազմակողմանի զարգացած անձնավորության ձևավորման հիմքերը: Շատ կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր դպրոցականին բազմակողմանիորեն ճանաչելու հանգամանքը, նրա պահանջմունքներն ու հակումները, հետաքրքրություններն ու ընդունակությունները ժամանակին ի հայտ բերելը և նրա անձնավորության զարգացման պրոցեսը ճիշտ ծրագրելն ու կազմակերպելը: Այսինքն՝ ուսումնական և առավելապես դասիարակչական գործոնների արդյունավետության առաջին գրավականը աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումն է:

Սովորողների նկատմամբ անհատական մոտեցումը գիտամեթոդական այն ելակետն է, որի վրա կառուցվում է ողջ ուսուցման դաստիարակչական պրոցեսը և որով պայմանավորված է այդ պրոցեսի հաջող ընթացքը: Առանց անհատական մոտեցման՝ հնարավոր չէ պլանաչափ, նպատակասլաց և, որ ամենակարևորն է, մանկավարժորեն ճիշտ իրագործել դպրոցականների դաստիարակության խնդիրներն ընհանրապես և բարոյական

դաստիարակությունը մասնավորապես։ Ուսումնադաստիարակչական պրոցեսին ներկայացվող այս կարևոր պահանջը և վերջինիս վրա կառուցվող մեթոդների և միջոցների մշակումն ու կիրառումը երկար ժամանակ դուրս էին մնացել մանկավարժական-հոգեբանական հետազոտությունների ոլորտից, կամ էլ չէին արժանացել անհարժեշտ ուշադրության։ Բայց ռեալ իրողություն է այն, որ յուրաքանչյուր մանկավարժ կամ դաստիարակ, գործ ունի կոնկրետ զարգացող անձնավորության հետ, որն ունի ուրույն անհատական, տարիքային և հոգեբանական առանձնահատկություն։

Անհատական մոտեցումը պահանջում է որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ քաջատեղյակ լինի դպրոցականի թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեկան զարգացմանը, նրա որպես անձնավորության ձևավորման օրինաչափություններին, այսինքն երեխային տեսնի ոչ թե պատրաստի, ավարտուն վիճակում, այլ լինելիության պրոցեսի մեջ։

Դաստիարակության աշխատանքը ցույց է տալիս, որ դպրոցականների անհատական առանձնահատկությունների ոչ լրիվ ու խորը հաշվառումը խիստ կերպով թուլացնում է մանկավարժական ներազդեցությունների և դաստիարակչական միջոցառումների արդյունավետությունը, զգալիորեն նվազեցնում դպրոցի ամբողջ դաստիարակչական աշխատանքի նպատակաուղղվածությունը։

Երբեմն անհատական մոտեցումը անհրաժեշտ է համարվում միայն ցածր առաջադիմություն ունեցող, անկարգապահ, այսպես կոչված «դժվար» աշակերտների նկատմամբ։ Ինչ վերաբերում է այն դպրոցականներին, որոնք առաջադիմում են ուսման մեջ, կարգապահ են ու հանգիստ, տեղիք չեն տալիս արտակարգ դեպքերի, կոնֆլիկտի մեջ չեն մտնում, այլ կերպ ասած՝ «ոչնչով չեն անհանգստացնում» ուսուցչին, ապա, սովորաբար, այդպիսի աշակերտների նկատմամբ չի կիրառվում անհատական մոտեցման սկզբունքը։ Մինչդեռ ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու հռչակած դրույթը՝ «Եթե մանկավարժությունն ուզում է մարդուն

դաստիարակել բոլոր կողմերով, ապա նա պետք է նախ ճանաչի նրան նույնպես բոլոր կողմերով», որն ստացել է մանկավարժական աքսիոմայի բնույթ, դարձել իմաստություն, այժմեական է ինչպես մեր ժամանակներում դաստիարակության պրոցեսը ճիշտ կազմակերպելու, այնպես էլ ըստ երևույթին բոլոր ժամանակների համար։

Անհատական մոտեցման անհարժեշտությունը պատճառաբանվում է դաստիարակության նպատակադրումով՝ յուրաքանչյուր երեխայի մեջ համակողմանիորեն զարգացնել նրա բոլոր ընդունակությունները, բարձրացնել ակտիվությունը, գիտակցականությունը, նրա անհատականությունը, իսկ դրա համար պահանջվում է գտնել ուսուցման և դաստիարակության գործը ակտիվորեն ղեկավարելու ճիշտ ուղիներ։ Այդպիսի մեթոդների մշակումը և կատարելագործումը պահանջում է հաշվի առնել երեխաների անհատական առանձնահատկությունները։

Երեխայի առանձնահատկությունները հաշվի առնելու համար պետք է նրան ուսումնասիրել։ Իսկ ինչպե՞ս ուսումնասիրել։ Երեխաներին հարկավոր է ուսումնասիրել գործունեության մեջ, ուսուցման և դաստիարակության բուն պրոցեսում, զարգացման պրոցեսում։ Դրա համար հարկավոր է օգտագործել գիտության բոլոր տվյալները, բացահայտել վարքի դրդապատճառները։

Մանկավարժը պետք է լինի զգայուն հոգեբան, որը կարողանա տեսնել, դիտել, թե ինչ է կատարվում երեխայի հոգում։ Երեխաների զարգացման օրինաչափությունների իմացումը մեծացնում է դաստիարակության դերը և ուժը։

Դպրոցական տարբեր տարիքի երեխաներին բնութագրելիս և նրանց նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելիս յուրաքանչյուր տարիքային շրջանում պետք է տեսնել երեխայի հատուկ արժանիքները, օժտվածությունը և հայտնագործել դրանք իրացնելու մեթոդներ։ Անհատական մոտեցումը պետք է կիրառել յուրաքանչյուրի նկատմամբ և ոչ

թե այն անձանց նկատմամբ, որոնք մեկուսացվել, դուրս են մնացել կոլեկտիվից: Անհատական մոտեցում ունենալ բնավ էլ չի նշանակում համակերպվել երեխայի անձնական քմահաճույքների հետ:

Անհատական մոտեցման պրոբլեմի ուսումնասիրությունը իր հետագա զարգացումն է ապրել անվանի հոգեբանների և մանկավարժների աշխատություններում:

Առանձնապես կարևոր նշանակություն ունի Լ. Ս. Սլավինայի՝ «Անհատական մոտեցումը ցածր առաջադիմություն ունեցող և անկարգապահ աշակերտների նկատմամբ» աշխատանքը:Վերջինս գրել է առաջավոր ուսուցիչների փորձի ընդհանրացման և անցկացված գիտափորձերի վերլուծության հիման վրա և պրակտիկ մեծ նշանակությունն ունի:

Անհատական մոտեցման պրոբլեմը քննարկվել է նաև Վ. Գուրինի, Ե. Ա. Ժիժինայի, Ա. Պ. Կրակովսկու, Լ. Լ. Ռուսյալիկի, Դ. Մ. Սոնինի, Լ. Կ. Տոկմակովի թեկնածուական դիսերտացիաներում: Հեղինակները բացահայտում են անհատական մոտեցման տարբեր կողմերը հանրակրթական միջնակարգ դպրոցի պայմաններում, նախադպրոցական հիմնարկներում, գիշերօթիկ դպրոցներում և այլն:

Հետազոտողները միաձայն այն միտնքն են արտահայտում, որ անհատական մոտեցումը և անհատական աշխատանքը սովորողների նկատմամբ դաստիարակության կարևոր հրատապ նշանակություն ունեցող սկզբունք է և բոլորն իրենց համոզմունքն են արտահայտում այն մասին, որ դպրոցում դաստիարակչական աշխատանքի հաջողությունները զգալի չափով որոշում է աշակերտի անձի անհատական առանձնահատկությունների իմանալով և հաշվառումով, որ աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը, նրա հետ տարվող անհատական աշխատանքը մանկավարժական ներգործման լուրջ միջոց է:

Կրթությունն անհատի, հասարակության ու պետության շահերից բխող

ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է: Այն նպատակաուղղված է ժողովրդի ու մարդկության հոգևոր ժառանգության, գիտելիքների ու փորձի յուրացմանը, հարստացմանը և սերունդներին փոխանցմանը:

Կրթության գաղափարը փոխվում է յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի, սոցիալական զարգացման ամեն մի փուլի հետ:

Մարդկության պատմության ընթացքում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը միշտ էլ դասվել են կարևոր նշանակության խնդիրների շարքում:

Դպրոցի՝ որպես ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևորագույն օջախի առջև նոր խնդիրներ ու նպատակներ են դրված, որոնք ժամանակի պահանջով փոխվել են և համապատասխանեցվել տվյալ ժամանակաշրջանին:

Անհատական մոտեցմամբ կրթությունը ուսուցման այնպիսի գործընթաց է, որի ընթացքում ուսուցիչն ու սովորողը հանդես են գալիս որպես ուսուցման սուբյեկտներ: Ուսուցման նպատակն է դառնում անձի, անհատականության, առանձնահատկությունների զարգացումը: Ուսուցման գործընթացում ձևավորվում է սովորողի աշխարհաճանաչողությունը, մտածողության ու վարքագծային առանձնահատկությունները:

Ուսումնական գործընթացում անձը յուրացնում է հասարակության կողմից ձեռք բերած փորձը: Գիտելիքներ յուրացնելով՝ անձը պետք է կարողանա դրանք ստեղծագործաբար և գործնականորեն կիրառել կյանքում:

Անհատական աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիաների հիմքում աճող սերնդի ինքնաճանաչման, ինքնադրսևորման անհատական զարգացման գործընթացն է:

Ներդրվեցին ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց արդյունավետ կիրառման համար անփոխարինելի տեղ ունեն այդ տեխնոլոգիաների հիման վրա գրված դասագրքերը: Ստեղծվեցին նոր դասագրքեր, որոնք համապատասխանում են տարբեր ընդունակություններ ունեցող սովորողների մակարդակին և բավարարում են դպրոցի ներկա պահանջները:Այսօրվա դասագրքերը հնարավորություն են ընձեռնում ուսուցումը կազմակերպել այնպես, որ, սովորելով նույն դասարանում, նույն ծրագրով ու դասագրքով, սովորողները նյութը յուրացնում են տարբեր մակարդակներով: Իսկ դա ենթադրում է շերտավորված ուսուցման կազմակերպում, որն ապահովում է յուրաքանչյուր սովորողի համակողմանի զարգացումը՝ միաժամանակ զարգացնելով նրանց ինքնուրույն աշխատելու կարողությունը:

Շերտավորված ուսուցումը նպաստում է սովորողների ինքնուրույնության ձևավորմանը, ուշադրության կենտրոնացմանը, ինքնագնահատմանը: Այս մոտեցմամբ ուսուցիչը այնպես է կազմակերպում ուսումնական գործընթացը, որ ուժեղ աշակերտը հնարավորություն ունենա յուրացնելու նոր նյութը բարձր մակարդակով, իսկ թույլ սովորողը ժամանակ ունենա այն յուրացնելու:

Շերտավորված ուսուցումը նպաստում է ավելի կայուն գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս արդյունավետ կազմակերպելու սովորողների ինքնուրույն գործունեությունը և նախապատրաստել համապատասխան գործունեության կատարմանը:

Սովորողների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպումը կօգնի նրանց յուրացնելու անհրաժեշտ գիտելիքներ և տիրապետելու ուսումնական կարողություններին:

Այսօրվա դասագիրքը այնպիսի կառուցվածք ունի, որը հնարավորություն է տալիս ուսուցչին միաժամանակ աշխատելու ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ ամեն մեկի հետ առանձին: Դասագրքերում ընդգրկված են տարբեր բարդություն ներկայացնող թեմաներ, որոնք թույլ են տալիս աշակերտների հետ տարվող աշխատանքները շերտավորել: Դասագրքերը կառուցված են պետական ծրագրերին համապատասխան:

Բոլորիս էլ հայտնի է, որ յուրաքանչյուր դասարանում կան մտավոր տարբեր ունակությունների ու կարողությունների տեր երեխաներ: Տարբեր են նաև նրանց գիտելիքների պաշարը, մտածելու և ստեղծագործելու կարողությունները, հիշողության և կամային որակները:

Յուրաքանչյուր աշակերտ տարբեր է իր ընդունակությունների մակարդակով և ունի սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում:

Աշակերտների հետ անհատական աշխատանքի կազմակերպումը և անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է անհատականացում: Այն հատկապես օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ էլ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Մանկավարժը չպետք է մոռանա, որ յուրաքանչյուր երեխա՝ անկախ տարիքից անհատականություն է, և ինքը պարտավոր է ուղղորդել նրան ուսուցման ողջ ընթացքում: Երեխան պետք է զգա, որ դպրոցն ու դասարանը երկրորդ հարազատ օջախն են իր կյանքում:

Դպրոցը ուսումնադաստիարակչական մի օջախ է, որի գործունեությունն ուղղված է տարբեր ընդունակությունների տեր երեխաների հետ աշխատանքի իրագործմանը: Համապատասխանաբար

ընդհանուր սկզբունքների և նպատակների ներքո դպրոցում պետք է ձևավորել նաև առանձնահատուկ մոտեցումներ տարբեր ընդունակությունների տեր երեխաների խմբերի համար:

Այստեղ հարկ է առանձնացնել բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին: Հենց այս երեխաներն են էապես բարձրացնում դպրոցի հեղինակությունը հանրակրթության ոլորտում:

ՈՒսուցման գործընթացում անհատական մոտեցում ցուցաբերելու գաղափարն արդեն բազմիցս է շեշտվում: Նույն դասարանում սովորող աշակերտների ընդհանրությունները, մտավոր կարողությունները և անձնային որակները տարբեր են լինում: Հետևաբար, ուսուցման գործընթացում աշակերտները չեն կարող ապահովել գիտելիքների յուրացման նույն մակարդակը և առաջ գնալ զարգացման նույն տեմպով:

Անհատական աշխատանքը անձի ինքնակարգավորման միջոց է դառնում, որը դաստիարակում է ինքնուրույնություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն:

Գործնական համատեքստ

Կատարել եմ անհատական աշխատանքներ առաջին դասարանում և հասկացել եմ, որ ուսուցիչը աշխատանքային պրոցեսում պետք է լինի ավելի զգոն և ուշադիր և ճիշտ կազմակերպի սովորողների հետ անհատական աշխատանքը:

Հասկացել եմ նաև, որ տարիքային որոշակի, ընդհանուր առանձնահատկությունների առկայության պայմաններում երեխաները տարբերվում են իրենց խառնվածքի, հետաքրքրությունների, մտածողության, կամքի, բնավորության և այլ անհատական գծերով:

Այնուհանդերձ ընդունելով երեխաների միջև եղած անհատական տարբերությունները՝ ես գտնում եմ , որ դրանք էլ անհաղթահարելի չեն և ուսուցումը հենված է միայն անհատական տարբերությունների վրա:

Յուրաքանչյուր երեխայի ակտիվ գործունության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է նրա մեջ առաջացնել հետաքրքրություններ: Նրանց ակտիվ գործունեության մղելու և հետաքրքրությունների զարգացման պրոցեսը անհնարին կլինի, եթե չճանաչենք երեխաներին և հաշվի չառնենք նրանց անհատական առանձնահատկությունները: Բացի դրանից երեխայի հետ հաղորդակցվելը, նրա վրա վրա ներգործություն ունենալը պահանջում են փոխադարձ մոտիկություն, վստահություն, համակրանք և հարգանք:

Ես գտնում եմ, որ նման փոխհարաբերություններ կարող են հաստատվել ոչ թե ձևական դաստիարակության պայմաններում, այլ յուրաքանչյուր երեխայի անձնավորությունը խորը հասկանալու դեպքում:

Անհատական մոտեցման այս կամ այն մեթոդի մանկավարժական արդյունավետությունը մեծ մասամբ որոշվում է մանկավարժի մանկավարժական հմտությամբ, ինչպես նաև նրա հեղինակությամբ:

Անհատական աշխատանքի միջոցով ուսուցիչը կարող է պարզել սովորողների ընդունակությունները, ժամանակին գտնել նրանց սխալները, պարզել ուսումնական գործընթացում հետագա անելիքները:

Անհատական աշխատանքը նպաստում է անձի ձևավորմանը, ինքնուրույն մտածելու ունակությանը, սեփական որոշումներ կայացնելու հարցում աշակերտին դարձնում է ավելի ինքնավստահ: Աշակերտի մոտ պետք է ձևավորվի ինքնուրույն աշխատելու կարողություններ և հմտություններ, որպեսզի աշակերտը հետագայում դժվարություններ չունենա:

Ինքնուրույն աշխատանքը կարող է կատարվել անհատական եղանակով, զույգերով կամ խմբային աշխատանքի արդյունքում: Կարևորն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Անհատականացված աշխատանքի դեպքում առաջադրանքը մշակվում է տվյալ անհատի կարիքներին համապատասխան:

Իսկ ինչպե՞ս կազմակերպել անհատական աշխատանքը:

Անհատական աշխատանքի կազմակերպման լավագույն ձևը անհատական քարտ - առաջադրանքներն են, որոնք կարող են լինել տարբեր բարդության աստիճանի:

Անհատական քարտ – առաջադրանքների կիրառմամբ շերտավոր ուսուցման կազմակերպումը ևս հարմար տարբերակ է:

Անհատական քարտ- առաջադրանքները կազմվում են նախապես և բաժանվում աշակերտներին՝ նրանց ընդունակություններին համապատասխան:

Ստորև կներկայացնեմ քարտ-առաջադրանքների օրինակներ շերտավոր ուսուցման կազմակերպմամբ՝ <<Պարագիծ>> և <<Կոչական>> թեմաներից.

Քարտ 1.

Դասարանը՝ 2-րդ

Թեման՝ Պարագիծ

1.Պատկերի պարագիծը 12 սմ է: Այդ պատկերի բոլոր կողմերը հավասար են: Գծի՛ր այդ պատկերը:

2.Գտի՛ր տրված պատկերի պարագիծը երկու եղանակով և գրի՛ր:

3.Գտի՛ր քառակուսու պարագիծը և գրիր:

Որքա՞ն կլինի այդ քառակուսու պարագիծը, եթե դրա կողմերից յուրաքանչյուրը մեծացնենք 2 սմ –ով: Գրի՛ր լուծման քո տարբերակները:

Քարտ 2.

Դասարանը՝ 2-րդ

Թեման՝ Պարագիծ

1.Պատկերի պարագիծը 12 սմ է: Որքա՞ն է կողմի երկարությունը, եթե պատկերը քառակուսի է:

2.Հաշվի՛ր 6 սմ և 3 սմ կողմերով ուղղանկյան պարագիծը:

3.Գծի՛ր 6 սմ և 3 սմ կողմերով քառակուսի: Գտի՛ր այդ քառակուսու կողմերի երկարությունների գումարը:

(Եղի՛ր ուշադիր):

Քարտ 3.

Դասարանը՝ 2-րդ

Թեման՝ Պարագիծ

1.ա)Գրի՛ր քանի՞ կողմ ունի այս պատկերը:

բ)Չափի՛ր և գրի՛ր տրված պատկերի կողմերի երկարությունները:

գ)Գումարի՛ր բոլոր կողմերի երկարությունները: Ի՞նչ ստացար, գրի՛ր:

2.Հաշվի՛ր այս պատկերների պարագծերը:

Ուղղանկյուն՝ 3սմ + 1սմ + …սմ + … սմ=

Քառակուսի՝ 3 սմ + …սմ + …սմ +…սմ=

Քարտ 1.

Դասարանը՝ 4-րդ

Թեման՝ Կոչական

1.Կազմի՛ր կոչական պարունակող նախադասություն:

2.Փոփոխի՛ր կազմած նախադասության կոչականի տեղը:

Քարտ 2.

Դասարանը՝ 4-րդ

Թեման՝ Կոչական

1.Դուրս գրի՛ր տրված նախադասության կոչականը:

Այսօր հետաքրքիր գիրք եմ նվեր ստացել, հայրի՛կ:

2. Զինվոր բառը օգտագործի՛ր նախադասության մեջ՝ որպես կոչական:

Քարտ 3.

Դասարանը՝ 4-րդ

Թեման՝ Կոչական

1.Նախադասությունը փոփխի՛ր այնպես, որ կոչականը լինի սկզբում:

Դրանք այն թզուկներն են, տղա՛ս, որոնք շատ են սիրում երեխաներին:

2.Կետադրի՛ր կոչականը:

Աշոտ քույրիկս սովորում է առաջին դասարանում:

Նմանատիպ քարտ-առաջադրանքների արդյունքներով ուսուցիչը կատարում է աշխատանքների վերլուծություն՝ պարզելով յուրաքանչյուր աշակերտի տվյալ թեմային տիրապետելու աստիճանը կամ դժվարությունները:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ուսուցման այլընտրանքային տեխնոլոգիաներից անհատականացված ուսուցման տեխնոլոգիան՝ կարող ենք ասել, որ այն արդյունավետ տեխնոլոգիա է: Անհատականացված ուսուցման տեխնոլագիայի կարևոր առանձնահատկությունն այն է, որ մեծ տեղ է տրվում ուսուցանվողի անհատական առանձնահատկությունների հաշվառման սկզբունքին և ինքնուրույն աշխատանքին: Պետք է ուղղակի ճիշտ կազմակերպել այդ գործընթացը, որպեսզի այն առավել արդյունավետ լինի:

Այսօր կրտսեր դպրոցում մշակվում և զարգացվում են կրթական նոր մոտեցումներ ու տեխնոլոգիաներ՝ նպատակաուղղված սովորողի ընդունակությունների և կարողությունների զարգացմանը:

Սակայն որքան էլ զարգանան տեխնոլոգիաները, և արդիական լինի անգամ վիրտուալ ուսուցումը, կարծում եմ, ոչինչ չի կարող փոխարինել ուսուցիչ-աշակերտ շփմանն ու հաղորդակցմանը: Եթե ուսուցիչը պատվով է կրում իր կոչումը, օժտված է մանկավարժական հմտություններով, աշխատում է սիրով ու ստեղծագործաբար, ապա նա միշտ կարող է գրավել աշակերտներին, բացահայտել և խթանել սովորողների ընդունակությունների զարգացումը, անձնավորության ձևավորումն ու կայացումը:

Հենվելով Հայաստանի առաջավոր մանկավարժների և դաստիարակների, ինչպես նաև մեր մանկավարժական գիտահետազոտական աշխատանքի փորձի ընդհանրացման վրա՝ ես եկա այն եզրակացության, որ անհատական մոտեցումը և անհատական աշխատանքը պետք է երևա ուսուցչի ամբողջ ուսումնադաստիարակչական աշխատանքում՝ առանձնապես դպրոցականների բարոյական դաստիարակության ծրագիրն իրականացնելիս:

Իմ կարծիքով անհատական մոտեցումը բարոյական դաստիրակության համակարգում կիրառվում է առաջին հերթին ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների նկատմամաբ և արտահայտվում այն բանում, որ մանկավարժը հիմնվելով սովորողների անձնային դրական կողմերի վրա ձգտում է վերացնել նրա բնավորության մեջ եղած բացասական գծերը:

Դաստիարակության պրոցեսում անհատական մոտեցման խնդիրը կապվում է անձնավորության զարգացման և ձևավորման հարցի հետ:

Այդ զարգացման մեջ իրական դեր են խաղում նաև յուրաքանչյուր անձնավորության անհատական առանձնահատկությունները, հակումները, նրա նպատակասլացությունը, ընդունակություններն ու բնավորությունը:

Դպրոցականների նկատմամբ անհատական մոտեցումը դաստիարակության և ուսուցման պրոցեսում պետք է իրականանա կոլեկտիվում, կոլետիվի միջոցով և կոլեկտիվի համար:

Ժամանակին մեծ մտավորականներից մեկը այսպիսի բնութագրում է կատարել. <<Ուսուցիչը աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն>>:

Առաջարկում եմ հանրակրթական ուսումնական հաստատություններում զգալի տեղ հատկացնել անհատականացված ուսուցմանը, դասավանդողների մոտ վերապատրաստումների միջոցով ձևավորել անհատականացված ուսուցման տեխնոլոգիայի կիրառման կարողություններ և հմտություններ, կիսվել տեխնոլոգիայի կիրառման առաջավոր փորձով և խթանել բոլոր աշակերտների անհատական առանձնահատկությունների զարգացմանը:

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասի տևողությունը 45 րոպե

Առարկան՝ Մայրենի

Դասի թեման՝ Ա հնչյուն-տառի ուսուցում:

Դասի նպատակները և խնդիրները՝

- ամրապնդել պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի մասին ունեցած գիտելիքները և կարողանալ եզրույթներն օգտագործել խոսքում,
- տարբերակել ձայնավոր և բաղաձայն հնչյունները,
- կատարել բառերի հնչյունային վերլուծություն,
- <<Ա>> հնչյունի ընկալում, տեղի որոշում բառի մեջ,
- դաստիարակել սեր հայրենիքի նկատմամբ,
- ամրապնդել նախայբբենական շրջանում ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները
- զարգացնել բանավոր խոսքը և հարստացնել բառապաշարը,
- կառուցել պարզ գծապատկերներ,
- մտքերն արտահայտել կապակցված խոսքի միջոցով,
- կատարել բառերի վանկատում,
- ա տառի գրություն՝ պարզ մասնիկները համադրելու միջոցով,
- լսելու և հաղորդակցվելու կարողության զարգացում:

Վերջնարդյունք – աշակերտները՝

- կիմանան տառանունը, կկարողանան տարբերել տառը և հնչյունը,
- կկարողանան վանկատել բառեր, կտարբերեն միավանկ և բազմավանկ բառերը,
- կկարողանան լսել, հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը,
- կկարողանան իրավիճակին համապատասխան ոչ ծավալուն բանավոր տեքստ կազմել,
- կկարողանան կարդալ ու գրել <<Ա ա>> հնչյուն-տառը,
- կկարողանան տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել նկարի բովանդակությունը,
- կկարողանան գործնականում կիրառել բառակապակցական գիտելիքները ,
- կկարողանան նկարագրել, բնութագրել կերպարները,
- կկարողանան կազմել բառեր, որտեղ <<Ա ա>> հնչյունը բառասկզբում, բառամիջում, բառավերջում է

Դասի կահավորումը՝
Նկար-բառեր, Մեսրոպ Մաշտոցի մեծադիր նկարը, տառադարան, տպագիր և ձեռագիր Ա տառը, թեմատիկ մեծադիր նկար:

Դասի ընթացքը՝
Խթանման փուլ

- Աշակերտները կներկայացնեն հայոց գրի ստեղծման պատմությունը:
- Հարց ու պատասխանի միջոցով կպատմեն պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն շղթայի մասին:

Ֆիզկուլտ դադար- «Դոփ դոփիկ»:

Իմաստի ընկալման փուլ

Կշռադատման փուլ

- Նախապես բաժանված քարտերի վրա կառանձնացնեն պատկերված առարկաների հնչյունները՝ ձայնավորները ներկելով կանաչ գույնով:

- Բացիկների մեջ կգրեն «Ա ա» մեծատառն ու փոքրատառը:

Կխոսենք Մեսրոպ Մաշտոցի և նրա ստեղծած հայոց այբուբենի մասին, կճանաչեն Ա հնչյունի տպագիր և ձեռագիր տառերը: Կկարողանան թեմատիկ նկարի բովանդակության շուրջ պատմություն հորինել, առանձնացնել ա հնչյունով սկսվող մեկնաբառը, բառի գծապատկերը հնչյունային վերլուծության ենթարկել և առանձնացնել ա հնչյունը, օգտագործել ա հնչյունը բառի տարբեր դիրքերում, պահպանել գրելու վայելչագրության կանոնները: Ձեռք կբերեն ինքնուրույն խոսք կառուցելու, միմյանց լսելու, համագործակցելու կարողություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Նախաշավիղ

2.Համացանց